ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N GAVAR-H-06-16

ք.Երևան
(կնքման վայրը)

«05» Հունիսի 2016թ.

«Գավառի ԲԿ » ՓԲԸ, ք. Գավառ, Ազատության 21, այսուհետ՝ «Պատվիրատու», որը գործում է կանոնադրության հիման վրա,մի կողմից, և «ՁԻ Դիզայն» ՍՊԸ ք.Երևան Կոմիտասի 54Վ, 413ս, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս տնօրեն Գրիգոր Սեմիրջյանի մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով՝ Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն պայմանագրի 1.2. կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:

1.2. Կատարողը պարտավորվում է մատուցել հետևյալ ծառայությունը՝ հոսթինգ ծառայության տրամադրում և դոմեյն անվան ժամկետի երկարացում այսուհետ՝ «Ծառայություն»:

1.3. Ծառայությունը մատուցված են համարվում Պատվիրատուի կամ նրա լիազոր ներկայացուցիչների կողմից հանձնման-ընդունման ակտի ստորագրման պահից:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Կատարողը պարտավոր է՝

2.1.1. Ծառայությունը մատուցել պայմանագրով սահմանված կարգով, պատշաճ որակով, ամբողջ ծավալով և սույն պայմանգրում նշված ժամկետ/ներ/ում:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Մատուցվող ծառայությունների դիմաց վճարել սույն պայմանգրի 3-րդ կետում նշված գնին համապատասխան:

2.2.2. Պայմանագիրը կնքելու պահին Կատարողին տրամադրել սույն Ծառայության պատշաճ մատուցման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը և տեղեկությունները:

2.2.3. Վճարել մատուցված ծառայությունների դիմաց սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետում:

Сканировано с CamScanner

2.3. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.3.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը.

3. *Պայմանագրի առարկայի գինը և վարձատրությունը*

3.1. Սույն պայմանագրի առարկայի գինը կազմված է՝

3.1.1.2 Գիգաբայտ ծավալով հոսթինգ ծառայության տրամադրում՝ 30 000 (Երեսուն հազար) դրամ / տարեկան:
3.1.2.Դոմեյն անվան ժամկետի երկարացում՝ 10 000 (տասը հազար) դրամ / տարեկան.

3.2. Սույն պայմանագրի առարկայի գինը կազմում է 40 000 (քառասուն հազար) դրամ:
3.3. Պայմանագրում սահմանված վճարները ներառում են վճարման ենթակա հարկերը:

4. *Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)*

4.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են.պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5. *Վեճերի լուծման կարգը*

5.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է ՀՀ դատարանի քննությանը:

Сканировано с CamScanner

6. Եզրափակիչ դրույթներ

6.1. Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված՝ Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից: Սույն պայմանագրի հավելվածները դրա անբաժանելի մասն են:

6.2. Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմի մոտ գտնվում է պայմանագրի մեկական օրինակ:

6.3. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից և գործում է մինչև 15 հունիսի 2017թ: Եթե սույն կետով նախատեսված պայմանագրի գործողության վերջնաժամկետը լրանալուց մինչև 15 օր առաջ Կողմերից որևէ մեկը չի ծանուցում պայմանագրի լուծելու կամ փոփոխության վերաբերյալ, ապա սույն պայմանագիրը համարվում է վերակնքված նույն պայմաններով՝ անորոշ ժամկետով:

7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	Կատարող
«Գավառի ԲԿ» ՓԲԸ	« ՁԻ ԴԻԶԱՅՆ » ՍՊԸ
ք. Գավառ, Ազատության 21	ք.Երևան Կոմիտասի պ.54Վ 413
ՀՎՀՀ 08417304	ՀՎՀՀ 00128594
« Ակբա-կրեդիտ Ագրիկոլ բանկ » ՓԲԸ	«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 22008514032900	Հ/Հ 2052222060001001
Տնօրեն _____	Տնօրեն _____ Գրիգոր Սեմիրջյան
(ստորագրությունը)	(ստորագրությունը)
Կ. Տ.	Կ. Տ.

Сканировано с CamScanner